



## ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԵՐԵՎԱՆԻ Ս. ՍԱՐԳԻՍ ԵԿԵՂԵՑՈՒՄ

«Ես դնեմ զձեռս ի վերայ սոցա, և դուք  
ամենեքեան աղօթս արարեք»:

1989 թ. սեպտեմբերի 10-ին հոգևոր մը-  
խիթարության և ուրախության օրեր եղան  
Երևանի Ս. Սարգիս եկեղեցում: Այդ օրը  
տեղի ունեցավ Ս. Էջմիածնի հոգևոր ճե-  
մարանի շրջանավարտներ Մանվել սար-  
կավազ Մաթևոսյանի և Վաչե սարկավազ  
Զիրեկյանի քահանայական ձեռնադրու-  
թյունը՝ ձեռամբ Արարատյան հայրապե-  
տական թեմի առաջնորդական փոխանորդ  
գերաշնորհ Տ. Գարեգին եպս. Ներսիսյա-  
նի:

Նախորդ օրը, շաբաթ երեկոյան, կիրակ-  
նամուտի ժամերգության ավարտին, Երե-  
վանի Ս. Հովհաննես եկեղեցում կատար-  
վել էր նորընծաների քահանայական կոչ-  
ման կարգը՝ ձեռամբ Գարեգին եպիսկո-  
պոսի և խարտավիղակությամբ Տ. Մակար  
աթղ. Հովհաննիսյանի:

Արարողության ընթացքում նորընծանե-  
րը հանդիսավորությամբ հանձն առան  
«Ամենայն պատրաստությամբ և առանց  
ձանձրանալու կալ պաշտօն Աստուծոյ և ոչ  
խափանել զգործն Աստուծոյ վասն մարմ-  
նաւոր գործոց...»:

Կիրակի օրը, առավոտյան, Երևանի ա-

ռաջնորդանիստ Ս. Սարգիս եկեղեցում  
սկսվում է ա. պատարագը: Օրվա պատա-  
րագիչն էր Արարատյան Հայրապետական  
թեմի առաջնորդական փոխանորդ գերա-  
շնորհ Տ. Գարեգին եպս. Ներսիսյանը:

«Հի ողորմած և մարդասէր ես Աստ-  
ուած» աղոթքից հետո սարկավազները,  
խարտավիղակի առաջնորդությամբ, եկեղե-  
ցու սեղանի ձախակողմյան աստիճաննե-  
րով բարձրանում են Ավագ խորան և,  
դառնալով դեպի ժողովուրդը, ձեռամբարձ  
հրաժարվում աշխարհից՝ կոչվելու հա-  
մար «...ի Կարգաւագութենէ ի քահանա-  
յութին սրբոյ եկեղեցոյ ի սպասատրու-  
թին» ըստ վկայութեան անձանց իրեանց  
և ամենայն ժողովրդեան»:

Աշխարհիկ կյանքից հրաժարումից և  
«Աստուածային և երկնային շնորհ» շա-  
րականից հետո նորընծաները ծնրադիր  
մոտենում և բոլորվում են ձեռնադրող  
սրբազան հոր շուրջը, իսկ սրբազանն իր  
ձեռքը դնելով նրանց գլխերին, արտա-  
սանում է. «Ես դնեմ զձեռս ի վերայ սո-  
ցա, և դուք ամենեքեան աղօթս արարեք,  
զի արժանի լիցին զաստիճան քահանա-

յութեան անարատ պահել առաջի սեղանոյ Տեառն Աստուծոյ» աղոթքը: Նորընծաներին շնորհվում է փիլոն, սաղավարտ, փորորար և շուրջատ: «Խորհուրդ խորին» շարականի երգեցողության հետ փակվում է վարագույրը:

Ս. պատարագը շարունակվում է մինչև «Ողջոյն տուք միմեանց» քարոզը: Օծման խորհրդավոր ու հուզիչ պահն է: Ձեռնադրող սրբազան հայրը սրբալույս մեռոնով օծում է քահանայական լրիվ զգեստավորման մեջ գտնվող նորընծաների ճակատն ու ձեռքերը և նրանց վերանվանում նոր անուններով. Մանվել սրկ. Մաթևոսյանին՝ Տ. Հովհան քահանա, Վաչե սրկ. Զիրեկյանին՝ Տ. Թադեոս քահանա:

Քահանայական օծում ստանալուց հետո նորընծաները դառնում են դեպի ժողովուրդը և տալիս իրենց առաջին օրհնությունը՝ «Խաղաղութիւն ամենեցուն»:

Հալարտ ձեռնադրության և օծման ա-

րարողության ձեռնադրող սրբազան հայրը խոսում է ոգեշունչ մի քարոզ՝ շնորհավորելով նորընծա քահանաներին և հույս հայտնելով, որ նրանք իրենց ապագա եկեղեցանվեր գործունեությամբ միշտ բարձր կպահեն հայ հոգևորականի սուրբ և նվիրական կոչումը:

Հաջորդ օրը, երեկոյան ժամերգությունից հետո, կատարվում է «Օրհնութիւն աբեղաի» և «Օրհնութիւն վեղարի» կարգը՝ ըստ Ձեռնադրության Մաշտոցի, և նորընծա Տ. Թադեոս քահանան ստանում է կուսակրոն քահանայության խորհրդանիշ վեղար:

\*  
\* \*

«Էջմիածին» ամսագրի խմբագրությունը և շնորհավորում է նորընծաներին, մաղթելով անմնացորդ նվիրում՝ ի ապաստանություն Հայաստանյայց Առաքելական Եկեղեցուն և հայ ժողովրդին:

